ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն
գրանցման հասցե՝ ք.Երևան, ք. Երևան, Կիևյան փողոց, շենք 30, բն. 35

գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 61
ՀՎՀՀ՝ 08282085

Ներկայացուցիչ՝ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության վարչության նախագահ Հայկ Մարության

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝
Կենտրոնական ընտրական հանձնաժողով
հասցե՝ ք. Երևան, Գևորգ Քոչարի փող., 21ա շենք

19.06.2026թ.

ԴԻՄՈՒՄ

(Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 258-Ա որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ)

Ի. ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Դիմումը ներկայացվում է **ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի** 1-ին մասի 11-րդ ենթակետի հիմքով, այն է՝ *Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.*

ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետը սահմանում է՝ *Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝* ***լուծում է*** *հանրաքվեի,* ***Ազգային ժողովի*** *և Հանրապետության նախագահի* ***ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.***

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածը (Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի լուծումը) սահմանում է՝

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3-76
«19» 06 2026թ.

1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել ***ընտրություններին մասնակցող կուսակցությունները*** *կամ կուսակցությունների դաշինքները:*

2. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացվել արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ հինգերորդ օրը, մինչև ժամը 18.00-ն:

13. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

... 2) անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը և

ա. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,

բ. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը,

գ. նշանակել ընտրությունների երկրորդ փուլ:

14. Եթե գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրությունների իրական արդյունքները, սակայն Սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են ***կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, <u>որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները:</u>***

II. ԴԻՄՈՒՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը սահմանում է՝ *Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր,* ***հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:***

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածը **(հավասար ընտրական իրավունք)** սահմանում է՝

1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

2. Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

3. Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածը **(ազատ ընտրական իրավունք)** սահմանում է՝

1. Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության

(կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածը **(ուղղակի ընտրական իրավունք)** սահմանում է՝ *Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից:*

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածը **(քվեարկության գաղտնիությունը)** սահմանում է՝ *Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:*

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ *Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում* ***առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին****, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները:* ***Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:***

****

II. ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՓԱՍՏԵՐԻ ՎԿԱՅԱԿՈՉՄԱՄԲ

2026թ. հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետությունում կայացած Ազգային ժողովի ընտրությունները զուգորդվել են քաղաքացիների ընտրական իրավունքի այնպիսի լայնամասշտաբ և համատարած խախտումներով, որոնք էականորեն փոխել են ընտրությունների պատկերը՝ կասկածի տակ դնելով քվեարկության արդյունքում ձեւավորված իշխանության լեգիտիմությունը :

ՀՀ Սահմանադրությունը հստակ սահմանում է, որ եթե գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրությունների իրական արդյունքները, սակայն Սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս Սահմանադրական

դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները:

Այս ընտրությունները առանձնացել են ոչ միայն առկա ընտրակեղծիքների քանակով, այլ նաև ընտրական իրավունքից բացահայտ և զանգվածային զրկման դեպքերով: Ընտրական իրավունքի բացառիկ խախտումներով է ընթացել նաև նախընտրական քարոզարշավը:

Սույնով ներկայացնում ենք առկա համատարած խախտումներն ըստ երկու փուլերի `

1. **Նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղ գտած խախտումներ**
2. **Քվեարկության օրը կատարված խախտումներ:**

******

1. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է՝

1. *Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:*

1.1 *Սույն օրենսգրքի իմաստով՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:*

6. *Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները:*

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածը *(Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը և նախընտրական քարոզչության սահմանափակումները)* սահմանում է՝

1.***Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ*** *և հանրային ծառայության պաշտոններ* ***զբաղեցնող անձինք,*** *որը*

պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների, նյութական և ***մարդկային ռեսուրսների օգտագործումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:***

Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2. Ազգային ժողովի պատգամավորին, համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ ***բացառելով սույն հոդվածի 1-ին մասում նշված վարչական ռեսուրսների օգտագործումը:***

3. Հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

Վերը նշված իրավական նորմերի պահանջները բազմաթիվ դրվագներով համատարած խախտվել են:

******

➢ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Առաջին հայացքից կարող է ստեղծվել տպավորություն, որ կենսաթոշակների բարձրացումը պետության սոցիալական գործառույթի իրականացմանը միտված քայլ է, որը բնականաբար ընդունելի և անհրաժեշտ է, և պետք է որ կապ չունենա ընտրական գործընթացների հետ:

Այդուհանդերձ, ընդամենը մի քանի փաստերի համադրման արդյունքում պատկերը փոխվում է:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2025թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ազգային ժողովում բյուջեի նախագծի քննարկման եզրափակիչ ելույթում բառացիորեն ասել է հետևյալը. *«Մենք ինչ ենք ասում, ասում ենք լավ թոշակառուների թոշակը ամսեկան 11000 դրամով կամ 10400 դրամով ավելացնենք, ինչ է անելու թոշակառուն, էդ գումարը ինչ է անելու, ինչի վրա է ծախսելու, մեր հետազոտությունը ցույց է տալիս, խոսքը այս դեպքում 65 պլյուս տարիքի մասին է, որ մարդկանց առաջնային ծախսը առողջապահությունն է, հետևաբար ինչի մենք մարդկանց տանք այդ փողը, որ ինքը չիմանա ինչպես այդ փողը արդյունավետ ծախսի ...[1]»:*

Հատկանշական է, որ իշխող քաղաքական ուժի ղեկավարը նախքան ընտրական գործընթացներ սկսելը հստակ դիրքորոշում ուներ այն մասին, որ թոշակառուն չգիտի 10400 ՀՀ դրամը արդյունավետ ծախսելու ձևը և դրա համար կարիք չկա թոշակ բարձրացնելու, սակայն ընդամենը մի քանի ամիս անց, երբ արդեն սկսվել էին ընտրական գործընթացները, թոշակառուն արդեն «միանգամից սովորեց արդյունավետ ծախսել 10400 ՀՀ դրամը» և նույն անձը՝ վարչապետ Փաշինյանը որը նաեւ կառավարող կուսակցության անունից ակտիվ քարոզարշավ էր ծավալում, որոշեց բարձրացնել կենսաթոշակները:

Այս պատկերը միայն մի բանի մասին է հուշում, որ Նիկոլ Փաշինյանը գտավ իր նախորդ որոշումից նեղսրտած թոշակառուների «սիրտը շահելու» ձևը՝ նրանց քվեն ստանալու նպատակով: Ընդ որում, այդ քվեն ստանալու համար ծախսվեցին ՀՀ պետական բյուջեի միջոցները, որոնք գոյանում են ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու (այդ թվում, ընդդիմադիր հայացքներ ունեցողների) վճարած հարկերից:

Ավելին, թոշակների բարձրացման հարցում Նիկոլ Փաշինյանը ամբողջությամբ փոխեց իր մոտեցումը բացառապես այն բանից հետո, երբ օրինական ուժի մեջ էր մտել հերթական ընտրությունների նշանակման մասին ՀՀ նախագահի հրամանագիրը և զանգվածային լրատվամիջոցներով տարածվել էին հիասթափված թոշակառուների բողոքները:

Ակնհայտ է, որ իր այս քայլով իշխող ուժը էականորեն բարելավեց իր նախընտրական դիրքերը մյուս կուսակցությունների համեմատ, որոնք օբյեկտիվորեն զրկված են պետական բյուջեի միջոցով նախընտրական սոցիալական ծրագրեր իրականացնելու հնարավորությունից: Վերջապես բազմաթիվ են նաև հրապարակումներն այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում հարցնում է, թե արդյոք գոհ է թոշակառուն իր ավելացված թոշակից:

---

[1]https://www.google.com/search?q=%D5%86%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC+%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB+%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%A8+%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1%D5%A9%D5%B8%D5%B7%D5%A1%D5%AF%D5%AB+%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6&sca_esv=d9350d9dd6718148&biw=1536&bih=890&sxsrf=ANbL-n6GjYSJVza5zsYVmZ-mT0WR-POQTw%3A1781760377347&ei=eYEzarjWFODzi-gPpqHkmQI&ved=0ahUKEwj49vbShpCVAxXg-QIHHaYQOSMQ4dUDCBI&uact=5&oq=%D5%86%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC+%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB+%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%A8+%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1%D5%A9%D5%B8%D5%B7%D5%A1%D5%AF%D5%AB+%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6&gs_lp=Egxnd3Mtd2l6LXNlcnAiTtWG1avVr9W41awg1ZPVodW31avVttW11aHVttWrINWl1azVuNaC1bXVqdWoINWv1aXVttW91aHVqdW41bfVodWv1asg1bTVodW91avVtjIFEAAY7wUyBRAAGO8FMgUQABjvBTIFEAAY7wUyBRAAGO8FSKMqUMgEWIAocAF4AJABAJgBywGgAYMeqgEGMC4yNy4xuAEDyAEA-AEBmAIboAKNHsICCBAAGIAEGMsBwgIGEAAYFhgewgIHEAAYgAQYE8ICChAAGIAEGBMYxwPCAggQABgWGB4YE8ICCBAAGIAEGKIEwgIFECEYnwWYAwCIBgGSBwYwLjI2LjGgB4tmsgcGMC4yNi4xuAeNHsIHBzAuMTQuMTPIB16ACAE&sclient=gws-wiz-serp#fpstate=ive&vld=cid:661d3f67,vid:p1HK5FwlDc4,st:0 (13-14 րոպեներ):

Հավելենք, որ այս մոտեցումը ուղղակի հակասում է նաև Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» պահանջներին, որի 2.3 կետը սահմանում է, որ կուսակցությունների և թեկնածուների համար պետք է երաշխավորվի հնարավորությունների հավասարություն, ինչը ենթադրում է պետական իշխանության չեզոք վերաբերմունք՝ այդ թվում ընտրարշավի և կուսակցությունների և թեկնածուների ֆինանսավորման հարցում[2]:

Հավելենք, որ այս փաստը չի վրիպել նաև միջազգային դիտորդների աչքերից:

Մասնավորապես՝ ԵԱՀԿ-ն նշել է, որ ընտրություններից առաջ ներդրված կամ նախաձեռնված սոցիալական և տնտեսական միջոցառումները ստեղծել են լրացուցիչ առավելություն իշխանության համար: Զեկույցում ասվում է. «Այս հանգամանքը, ինչպես նաև վերջերս ներդրված կամ նախաձեռնված սոցիալական և տնտեսական միջոցառումները, առավելություն են ստեղծել իշխող կուսակցության համար և խաթարել են քարոզչություն իրականացնելու հավասար հնարավորությունները»[3]:

➢ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԱՆԽՆԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Վարչական ռեսուրսի օգտագործումը հավաքներին քաղաքացիների՝ այդ թվում երեխաների ներկայությունը ապահովելու համատեքստում.

Մամուլը ողողված է նյութերով այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի հանրահավաքին կիրառվել է լայնամասշտաբ վարչական ռեսուրս՝ ներգրավվել են դպրոցի տնօրենները, ուսուցիչները, անգամ աշակերտները, համայնքային կազմակերպությունների աշխատողները և այլն: Ընդ որում այս ամենը նաև դասերի հաշվին է կազմակերպվել և աշխատանքի ժամերին:

Այս խախտումներն այնքան մասշտաբային են եղել, որ անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է դրանց արձագանքել: Մասնավորապես՝ մայիսի 13–ին, Արագածոտնի մարզում ՔՊ–ի քարոզարշավին ավտոբուսներով բերել էին մարզի բնակավայրերի դպրոցների ուսուցիչներին ու աշակերտներին, ընդ որում, դասի ժամին: Ուսուցչուհիներից մեկը NEWS.am–ի հետ անկեղծացել էր, որ հանուն Նիկոլ Փաշինյանի դասերը կրճատել են: Սրան արձագանքել էր ԿԳՄՍ նախարարությունը՝ նշելով, որ նախարարությունը քննություն կանցկացնի Արագածոտնի մարզում քարոզարշավին դպրոցների մասնակցության գրանցված դեպքերով[4]:

Զավեշտ է այն, որ ընդդիմադիր գործիչներից Արման Թաթոյանը հրապարակում է ձայնագրություն վարչական ռեսուրսի կիրառման մասին, որից հետո հրապարակում է նույն անձանց միջև երկրորդ ձայնագրությունը, որով պետական ծառայողը սպառնում է ձայնագրությունը տարածած անձին, ինչն արդեն իրապես ամենաթողության դրսևորում է:

Մասնավորապես՝ Արման Թաթոյանը Հանրային հեռուստաընկերության եթերում ձայնագրություն է հրապարակել այն մասին, որ Մարտունի համայնքի կրթության բաժնից հրահանգել են, որ վերջիններիս տղամարդ աշխատակիցները մասնակցեն ՔՊ-ի մարզային գրասենյակի բացմանը: Հետո կանչել են քաղաքապետարան ու հարկադրել, որ իրենց ներկայացնեն անունների ցանկ, թե ովքեր չեն սատարում ՔՊ-ին[5]:

---

[2] https://docs-venice.coe.int/images/SITE%20IMAGES/Publications/Code_conduite_PREMS%20026115%20GBR.pdf

[3] http://armlur.am/1567531/

[4] https://news.am/hy/news/1035039

[5] https://www.aysor.am/am/news/2026/05/25/%D4%B9%D5%A1%D5%A9%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6/2423298

Այս ձայնագրության հրապարակումից հետո ոչ միայն որևէ իրավական գործընթաց տեղի չի ունենում այլ նաև նույն կինը երկրորդ անգամ է զանգում և ահաբեկում տնօրեններին «այդ բառը չեմ կրկնում արդեն հասկացաք՝ ինչ արարք եք արել»[6] արտահայտությունը կատարելով՝ ակներևաբար ակնարկելով գողական ենթամշակույթին հարիր «գործ տալու» ինստիտուտը:

Վերջապես անգամ միջազգային դիտորդական կազմակերպություններն են ըստ էության արձանագրել վարչական ռեսուրսի կիրառման փաստը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջազգային դիտորդական առաքելության նախնական եզրահանգումներում արձանագրվել է, որ ստացվել են իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների նկատմամբ ճնշում գործադրելու վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ[7]:

Հրապարակվել են ձայնագրություններ, որտեղ ենթադրաբար Արմավիրի տարածաշրջանային քոլեջի աշխատակից կինն ասում է.- «Երեխեք ջան, վաղը ժամը հինգին մենք պետք է հրապարակում հավաքվենք, երկու կուրսին էլ վերաբերում է: Նրանք, ովքեր շատ հեռվից են գալու, խնդիր չկա մի քանի հոգու բացակայությունը ոչինչ: Բայց, նրանք, ովքեր ունեն այդ հնարավորությունը գալու, խնդրում եմ, ես էլ եմ գալու: Ինձ հանձնարարել են, որ ես ասեմ, ես էլ ձեզ եմ հանձնարարում, երեխեք: Այնպես չլինի, որ ես գնամ կանգնեմ հրապարակում ու տեսնեմ, որ իմ երկու խմբից ոչ մեկ չկա: Նայեք, տեսեք, ես պետք է իմ տնօրինության երեսը պարզ անեմ, դուք էլ՝ իմ»: Մեկ այլ ձայնագրությունում կինը նշում է. «Չգիտեմ՝ ինչն է պատճառը, բայց նաև հանձնարարված է, որ մաքսիմալ շատ լինեք»[8]:

Վարչական ռեսուրսի օգտագործումը ընդդիմադիրներին վարկաբեկելու համատեքստում.

Վարչական ռեսուրսն օգտագործվել է նաև այլ ընդդիմադիր ուժերի վերաբերյալ հասարակության մոտեցումները փոխելու համատքեստում՝ անմեղության կանխավարկածի բացառիկ խախտումներով:

Մասնավորապես՝ տարածվել են ենթադրյալ ընտրակաշառք տալու վերաբերյալ ձայնագրություններ, որոնք ակնհայտորեն նախաքննական գաղտնիք են պարունակում:

---

[6] https://www.google.com/search?q=%D4%B9%D5%A1%D5%A9%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8+%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A5%D5%AC+%D5%A7+%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%B8%D6%80%D5%A4+%D5%B1%D5%A1%D5%B5%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6&sca_esv=fd3dfaa5d0878a4a&biw=1536&bih=890&sxsrf=ANbL-n4i5nEMM_zcG0du9HH-szq3oFXtnw%3A1781778370042&ei=wsczavaCAsSVxc8P4MOT-AY&ved=0ahUKEwj268HWyZCVAxXESvEDHeDhBG8Q4dUDCBI&uact=5&oq=%D4%B9%D5%A1%D5%A9%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8+%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A5%D5%AC+%D5%A7+%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%B8%D6%80%D5%A4+%D5%B1%D5%A1%D5%B5%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6&gs_lp=Egxnd3Mtd2l6LXNlcnAiVNS51aHVqdW41bXVodW21agg1bDWgNWh1brVodaA1aHVr9Wl1awg1acg1aXWgNWv1oDVuNaA1aQg1bHVodW11bbVodWj1oDVuNaC1anVtdW41oLVtjIFEAAY7wUyBRAAGO8FMgUQABjvBTIFEAAY7wVI2jRQ7xlY8C5wA3gAkAEAmAHSAaABxg2qAQUwLjguMrgBA8gBAPgBAZgCBqACyQTCAggQABjvBRiwA5gDAIgGAZAGBJIHBTMuMS4yoAeqHLIHBTAuMS4yuAe_BMIHBTAuNC4yyAcPgAgB&sclient=gws-wiz-serp#fpstate=ive&vld=cid:7a791938,vid:zk-oKES8n6I,st:0

[7] http://armlur.am/1567531/

[8] https://www.azatutyun.am/a/tatoyany-hraparakel-e-dzayna`groutyounner-ortegh-ousanoghnerin-hordoroum-en-masnaktsel-kp-i-karozarshavin/33757755.html

Ընդ որում, այս ձայնագրությունները տարածել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն իր պաշտոնական էջի մջոցով:

Վստահաբար հակակոռուպցիոն կոմիտեում բազմաթիվ գործեր են քննվում և առհասարակ բազմաթիվ քրեական գործերով առկա են ձայնագրություններ, սակայն հրապարակվում են հենց նախընտրական քարոզարշավի փուլում և բացառապես այն ձայնագրությունները, որոնք վերաբերում են ենթադրյալ ընդդիմադիր կուսակցությունների կատարած խախտումներին եւ կարող են ազդել ընտրողի ընտրական կամքի վրա: Ընդ որում հետագայում այդ քրեական գործերով մեղադրական դատավճիռ չլինելու դեպքում անհնար է լինելու իրապես վերականգնել արդարացված անձի իրավունքները, քանի որ մի ամբողջ ընտրական գործընթաց է դրա արդյունքում այլ կերպ իրականացվել: Միեւնույն ժամանակ, հատկանշական է, որ կառավարող կուսակցության (կամ դրա օգտին) արված խախտումների վերաբերյալ գաղտնալսումներ ու այլ վարկաբեկող նյութեր ՀԿԿ-ն չի հրապարակել:

Չնայած որևէ անձ օրինական ուժ ստացած դատական ակտով չի դատապարտվել կամ անմեղ ճանաչվել ենթադրյալ ընտրակաշառք տալու համար, սակայն հասարակության մոտ մոնտաժված եւ ընտրողաբար ներկայացված ձայնագրությունները արդեն իսկ ձևավորել են տպավորություն, որ բաժանվել է ընտրակաշառք:

Ավելին, Նիկոլ Փաշինյանն արդեն քվեարկությունից հետո հայտարարել է, որ որևէ մեկը ընդդիմությանը առանց ընտրակաշառքի չի ընտրել:

Նախ մեր համոզմամբ այս հայտարարությունը զրպարտություն է հարյուր հազարավոր քաղաքացիների նկատմամբ, որը վիրավորում է յուրաքանչյուր ոչ իշխանական հայացքներ ունեցող քաղաքացու արժանապատվությունը:

Այս հայտարարությունը խայտառակ վիրավորանք է նաև պետական իրավասու մարմինների հասցեին, որոնք, ըստ Փաշինյանի հայտարարության, իրենց հանցավոր անգործությամբ թույլ են տվել, որ ընտրողների զգալի մասը ստանա ընտրակաշառք և ըստ այդմ կատարի իր ընտրությունը: Նման հայտարարությանը պետք է հաջորդեր ՀՀ Ոստիկանապետի, ՀՀ գլխավոր դատախազի, ԱԱԾ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների և այլոց հրաժարականները, ինչը բնականաբար տեղի չունեցավ:

Իրականում, եթե այս հայտարարության հեղինակ Նիկոլ Փաշինյանը հավատում է իր ասածի իրավացիությանը, ապա հենց ինքը պետք է դիմեր ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով ՀՀ Սահմանադրական դատարան և պահանջեր նոր ընտրությունների նշանակում, քանի որ այս տրամաբանությամբ իշխող կուսակցությունը պետք է ստանար ոչ թե 49 տոկոս քվե, այլ շատ ավելին՝ հավաքելով բաղձալի սահմանադրական մեծամասնությունը: Խիստ անտրամաբանական է թե ինչու իշխող կուսակցությունը «տեր չի կանգնում» իր քվեներին, ինչու է թույլ տալիս, որպեսզի քաղաքացիների քվեների մեծ մասը չծառայեն իրենց նպատակին և չարտահայտեն քաղաքացիների իրական կամքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ընտրության արդյունքներն անվավեր չճանաչելը կարող է հասարակության մոտ ստեղծել այնպիսի ընկալում, որ վերջինս կամ լուրջ չի վերաբերվում Հայաստանի Հանրապետության վարչապետի հայտարարություններին, քանի որ մեր համոզմամբ միայն այս հայտարարությունը՝ հաշվի առնելով հայտարարության հեղինակի զբաղեցրած պաշտոնը, արդեն իսկ անհրաժեշտ և բավարար է 2026թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 258-Ա որոշումն անվավեր ճանաչելու և նոր ընտրություններ նշանակելու համար, քանի որ ամենաբարձր մակարդակով փաստում է, որ քաղաքացիները չեն ունեցել իրենց ընտրական իրավունքը ազատորեն իրացնելու հնարավորություն:

➢ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՉ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԻՆ ԱՀԱԲԵԿՈՒՄ

Նիկոլ Փաշինյանը հնչեցրել է ընդդիմադիր ուժերի ղեկավարներին ձերբակալելու հայտարարություններ: :

Նիկոլ Փաշինյանը նաև ահաբեկել է ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիներին՝ հայտարարելով, թե եթե իրենց չընտրեն՝ պատերազմ կլինի՝ ավելին, նաև հստակեցրել կամ նախանշել է պատերազմի սկիզբը՝ սեպտեմբեր ամիսը:

Նիկոլ Փաշինյանը մասնավորապես, հայտարարել է՝ «Հիմա էլ ասում եմ ընելու է պատերազմ սեպտեմբերին ու աղետաբեր պատերազմ, եթե Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը սահմանադրական մեծամասնություն չունենա, չեմ ասում ընտրություններում հաղթի, ոնց ուզում եք գնահատեք ...»[9]:

Սա իրապես աննախադեպ նախընտրական քարոզարշավ էր ընդդիմադիր բոլոր ուժերի համար, երբ նրանք ստիպված էին իրենց ընտրողին բացատրել, թե ինչու է պատերազմով սպառնում ոչ թե թշնամին, այլ իրենց նախորդ ընտրության արդյունքում վարչապետ դարձած անձը:

Վերջապես իր նախընտրական ելույթներում Նիկոլ Փաշինյանը բազմիցս նշել է, որ տասն ամսական խաղաղությունը նման է տասն ամսական երեխայի, «եթե մենք նրա նկատմամբ հոգ չտանենք նա չի ապրի, դրա համար ես Ձեզ կոչ եմ անում հունիսի 7-ին գնալ ընտրական տեղակասեր և տեր կանգնել խաղաղությանը և քվեարկել իր օգտին»[10]:

Նիկոլ Փաշինյանը բազմաթիվ անգամներ հայտարարել է, որ ընդդիմադիր երեք ուժերը, որոնց նա անվանում է Պատերազմի եռագլուխ կուսակցություն, ցանկանում է քաղաքացիներին հրել պատերազմի հորձանուտը, «որպեսզի իրանք թռնեն և վայելեն իրենց կղզիները»[11]:

Վերջապես Նիկոլ Փաշինյանը առանձնացրել է ընդդիմադիր երեք ուժերի՝ նրանց անվանելով «պատերազմի եռագլուխ կուսակցություն»:

Առաջին հայացքից այս ատելության խոսքը և պատերազմով ահաբեկումը պետք է վերաբերվեր հենց առանձնացված ուժերին՝ Հայաստան Դաշինքին, Ուժեղ Հայաստան կուսակցությանը և Բարգավաճ Հայաստան կուսակցությանը, սակայն սրանով ստեղծվել է ակնհայտ անհավասար մոտեցում և մրցապայքար ընդդիմադիր դաշտում:

Նիկոլ Փաշինյանն իր խոսույթով հասարակությանը համոզել է, որ իրական ընդդիմադի ուժեր են հենց վերը նշված երեք կուսակցությունները՝ ստեղծելով տպավորություն, որ մնացած կուսակցություններին պետք չէ լուրջ վերաբերվել կամ որ դրանք ընդդիմադիր չեն:

Այս հռետորաբանությունը մի կողմից ահաբեկում է հասարակությանը պատերազմով, մյուս կողմից մնացած բոլոր ընդդիմադիր կուսակցությունների համար ստեղծում է անհավասար մրցապայքար ընդդիմադիր դաշտում, քանի որ ազդում է ընդդիմադիր ուժերի վերաբերյալ հասարակական ընկալման վրա:

---

[9] https://www.facebook.com/watch/?v=3376104029207167

[10] https://www.youtube.com/watch?v=rs8XlAw3UY8

[11] https://www.facebook.com/watch/?v=968113589448204

Հատկանշական է նաև այն հրապարակայնությունը, որը բնութագրական էր ընդդիմադիր գործիչների նկատմամբ քրեական վարույթներ նախաձեռնելուն, նրանց գաղտնալսելուն, հրապարակային ձերբակալություններին, կերակրող մորը կալանավորելու միջնորդություն ներկայացնելուն և այլն: Իշխանության այս գործելակերպը նույնպես հուշում է բացառապես մեկ փաստի մասին, որ Նիկոլ Փաշինյանի նպատակը իր իսկ սեփական ժողովրդին ահաբեկելու միջոցով նրանց քվեն ստանալն է:

Մի կողմից, Նիկոլ Փաշինյանը ահաբեկում է պատերազմով, մյուս կողմից ազատազրկմամբ, այն հաշվարկով, որ հասարակության համեմատաբար բարձր իրավագիտակցության մակարդակ ունեցող անդամները, որոնք հասկանում են, որ խաղաղությունը չի կարող մեկ անձի ընտրվելով պայմանավորված լինել, ահաբեկվեն որ իրենց նույնպես կձերբակալեն, քանի որ գաղտնալսում են և մոնտաժված նյութեր տարածում, իսկ համեմատաբար ցածր իրավագիտակցություն ունեցող հասարակության անդամները կընտրեն իշխող ուժին, քանի որ անկեղծորեն հավատում են, որ հենց միայն Նիկոլ Փաշինյանն է խաղաղության գրավականը և կաղոթեն նրա երկարակեցության համար, որպիսի նույնքան ժամկետով երկարաձվի մեկ անձի բերած խաղաղությունը:

➢ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՈՉ ՀԱՄԱՉԱՓ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Իշխող քաղաքական ուժի կողմից իրականացված քարոզարշավը լայնորեն լուսաբանվել է ինչպես Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, այնպես էլ իշխանական կուսակցության հետ ասոցացվող լրատվամիջոցներով:

Ընդդիմադիր ուժերը չեն ունեցել լուսաբանման հավասար հնարավորություններ, նրանք չեն լուսաբանվել այդ թվում հանրային հեռուստատեսությամբ՝ բացառությամբ պաշտոնական եթեր տրամադրելու խիստ սահմանափակ դեպքերի:

Ընդ որում, պետական աջակցությունը հատկապես պետք է վերաբերեր այն ընդդիմադիր ուժերին, ովքեր չունեն սեփական լրատվամիջոց և նրանց լուսաբանման միակ հնարավորությունը պետության աջակցությամբ լուսաբանվելն է, ինչը բնականաբար տեղի չի ունեցել:

Եթե նույն օրը տարբեր կուսակցություններ նախընտրական քարոզարշավ անեին, ապա դրանք Հանրային հեռուստաընկերության եթերում վստահաբար կամ չէին հայտնվելու, կամ էականորեն ավելի պակաս ժամաքանակով էին հայտնվելու, քան իշխող կուսակցությունը:

Հավելենք, որ այս փաստը արձանագրվել է նաև ԵԱՀԿ դիտորդների կողմից, որոնք քննադատել են Հանրային հեռուստաընկերության աշխատանքը: Զեկույցում նշվում է. «Հանրային հեռուստաընկերությունը ... ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության»[12]:

Անհավասար լուսաբանման ամենացայտուն դրսեւորումը, թերեւս, հունիսի 5-ին՝ քարոզչության վերջին օրը, Հանրային ՀԸ եթեր ՔՊ կուսակցության վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանին հրավիրելն էր այն դեպքում, երբ կուսակցությունների ցուցակների առաջին համարների մասնակցությամբ Հանրայինի գլխավոր բանավեճը տեղի էր ունեցել նախօրեին՝ հունիսի 4-ին: Սա ակներեւաբար անհավասար պայմաններ է ստեղծել թեկնածուների համար եւ հնարավորություն տվել Փաշինյանին՝ ի մի բերել

[12] https://armlur.am/1567531/

գլխավար բանավեճի ժամանակ իր ելույթի հիմնական կետերն ու ավելի հանգիստ պայմաններում անդրադառնալ ընդդիմախոսների փաստարկներին:

Պետության գործառույթը ազատ և արդար ընտրությունների կազմակերպումն է, որի անբաժանելի բաղադրիչն է հավասար լուսաբանման ապահովումը թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր ուժերի համար, սակայն Հանրային հեռուստաընկերությունը բոլոր հնարավոր միջոցներով լուսաբանել է հենց իշխող կուսակցության կողմից իրականացված քարոզարշավը:

➢ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՆՆԴԻ ԲԱԺԱՆՈՒՄ

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է՝ *Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը* ***թեկնածուներին,*** *ընտրություններին մասնակցող կուսակցություններին* ***արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց*** *կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ,* ***սննդամթերք,*** *արժեթղթեր, ապրանքներ* ***կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:***

Նիկոլ Փաշինյանի ամբողջ քարոզարշավը զուգորդվել է տարբեր տեսակի սննդամթերք բաժանելով և դա արվել է ակնհայտ, ավելին՝ լայնորեն լուսաբանվել է, սակայն որևէ պատկան մարմին որևէ գործողություն չի կատարել ընտրական օրենսդրության պահանջները պահպանելու ուղղությամբ:

Փաշինյանի ՝ առաջին հայացքից անմեղ թվացող քաղցրավենիքի բաժանումը վստահաբար չէր ներվելու որևէ ընդդիմադիր առաջնորդի:

Ինչ վերաբերում է «ծառայություններ խոստանալուն», ապա լինելով Հայաստանի Հանրապետության վարչապետ և տիրապետելով հսկայական վարչական ռեսուրսի և բյուջետային միջոցների, Նիկոլ Փաշինյանը նորից հրապարակավ տարբեր խոստումներով է հանդես եկել և տարբեր ծառայություններ խոստացել իր ընտրողներին՝ իսկ անհնազանդներին՝ հրահանգել է «ազատել աշխատանքից և ուղարկել բիսետկում պպզելու[13]»:

2. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

➢ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍՈՎ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը անվավեր է ճանաչում իր իսկ կողմից ընտրություններն ակնհայտ խախտումով կազմակերպելու պատճառով ընտրատեղամասի քվեարկության արդյունքները և հայտարարում է, որ չի լինելու վերաքվեարկություն, այսինք իրեն ժողովրդավար հռչական պետությունում զինվորը զրկվում է ընտրելու իրավունքից, քանի որ իրեն սահմանված ժամին ուղղակի թույլ չեն տվել գնալ ընտրատեղամաս, իսկ քաղաքացին զրկվում է սահմանված ժամին իր կատարած քվեարկությունից, որովհետև զինվորին «ստիպել են» ընտրական օրենսդրության խախտումներով քվեարկել:

---

[13] https://www.youtube.com/watch?v=2Jdmy21Ti18

Սա զավեշտ է ոչ միայն իրեն ժողովրդավար, այլ նաև իրավական հռչակած ցանկացած պետության համար, քանի որ բացի ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերաքվեարկություն նշանակելու այս կամ այն քմահաճ մոտեցումից, օրենսդիրն է հստակ սահմանել այն հետևանքը, որը վրա է հասնում ընտրատեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում, այն է՝

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ *Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում* ***առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին****, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները:* ***Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:***

Ուստի ընտրական տեղամասի արդյունքները չեն կարող ուղղակի անվավեր ճանաչվել և վերանալ, իսկ ընտրողների քվեն չի կարող անհետանալ: Ընտրական տեղամասի արդյունքների անվավեր ճանաչման դեպքում հնարավոր է երկու պարտադիր հետևանքներից որևէ մեկի վրա հասնելը՝

- ***ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնել, կամ***
- ***եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:***

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուղղակի չունի լիազորություն քաղաքացուն զրկել իր քվեից որևէ պարագայում, իսկ սույն դեպքում՝ իր իսկ կողմից իր լիազորությունները պատշաճ չիրականացնելու արդյունքում:

Այս տրամաբանությամբ ի թիվս այլոց ստեղծվում է նաև խիստ վտանգավոր նախադեպ առ այն, որ ցանկացած տեղամաս, որտեղ տվյալ պահին իշխող կուսակցության համակիրները սակավ են, կարող է ընտրությունները կազմակերպել կեղծիքներով, որից հետո ճանաչել ընտրատեղամասի արդյունքներն անվավեր և չնշանակել վերաքվեարկությունը՝ զրկելով տվյալ տեղամասի ընտրողներին իրենց ընտրելու իրավունքից:

Այս վտանգավոր նախադեպը ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից չվերացվելու դեպքում օրինակ մյուս ընտրություններին կարելի է Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի բոլոր ակնհայտ ընդդիմադիր ընտրատեղամասերում սահմանված ժամին չփակել տեղամասը, թույլ տալ որ սահմանված ժամից ուշ ընտրեն, որից հետո բոլոր «իշխանությանը ոչ հաճո» ընտրատեղամասերի արդյունքներն ուղղակի անվավեր ճանաչել՝ մարդկանց զրկելով ընտրելու իրավունքից:

Ավելին, այս տրամաբանությամբ դա կարելի է անել նաև հաշվարկից հետո, օրինակ այն տեղամասերում, որտեղ իշխող կուսակցությունը քիչ ձայներ ունի, ուղղակի ինչ-որ պատճառով, որը վստահ ենք կգտնվի, ճանաչել ընտրատեղամասի արդյունքներն անվավեր «և վերջ»:

Մեր կարծիքով սա խիստ վտանգավոր նախադեպ է և իրավական անվտանգության հարց, որն էլ իր հերթին միտված է ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքերի խարխլմանը:

- **ԱԶԱՏ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍՈՎ**

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածը **(ազատ ընտրական իրավունք)** սահմանում է՝

1. Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:

Քվեարկության օրը 79.125 քաղաքացու տվյալներ հնարավոր չի եղել նույնականացնել տեխնիկական սարքի միջոցով և դրանք մասնագետի կողմից ստեղնաշարով մուտք են արվել տեխնիկական սարքավորման մեջ:

Սա մենք չէինք գնահատի ազատ ընտրական իրավունքի խախտում, եթե մատնահետքով կամ տեխնիկական սարքի միջոցով նույնականացման եղանակով քվեարկությունը կազմակերպվեր առաջին անգամ: Սակայն, ինչպես գիտենք, այս համակարգը նոր չի ներդրվել և առնվազն չէր կարող ունենալ ոչ թե մեկ, կամ երկու այլ յոթանասունինը հազար խնդիր:

Այս թիվը կազմում է տպված քվերարկության կտրոնների հինգ տոկոսից ավելին, ինչն արդեն այնպիսի մասշտաբային խնդիր է, որը պետք հանգեցնի ընտրությունների արդյունքների անվավերության:

Ազատ ընտրության իրավունքը մասսայաբար խախտվել է զինվորների և տարեցների դեպքում:

Համացանցում բազմաթիվ են այնպիսի տեսանյութերը, որոնցից ակնհայտ է, որ քաղաքացին իր կամքով չի ունեցել ընտրելու հնարավորություն և նրան ուղղորդել է այլ անձ:

Համացանցում տարածվել են տեսանյութեր նաև այն մասին, որ մեկից ավելի անձ է մտնում քվեախցիկ, բացի այդ արձանագրվել են նաև քվեախցիկից դուրս քվեարկության դեպքեր[14]:

➢ ՈՒՂՂԱԿԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍՈՎ

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածը **(ուղղակի ընտրական իրավունք)** սահմանում է՝ *Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների,* ***ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից:***

Ուղղակի ընտրական իրավունքի բովանդակությունը կազմում է ոչ միայն ընտրողի կողմից ընտրատեղամաս ներկայանալը, այլ նաև ընտրողի կամքի արտահայտման հնարավորության ընձեռումը ընտրատեղամասում:

Եթե ընտրատեղամաս ներկայացած ընտրողին, որը դիցուք պետական ծառայող է, չեն տրամադրում իր նախընտրած ուժի քվեաթերթիկը, ապա ի թիվս այլոց խախտվում է նաև ուղղակի ընտրական իրավունքը, քանի որ վերջինս ստիպված պետք է ընտրություն կատարի իրեն տրամադրված քվեաթերթիկները ներկայացնող ուժերի միջև և ակնհայտ

[14] https://news.am/hy/news/477002

է, եթե նա պետական ծառայող է, ապա «չի հանդգնի» բարձրաձայնել ընտրակեղծիքի մասին:

Եթե ընտրողը լուսանկարում է իր ընտրած քվեաթերթիկ, ապա անկախ դրդապատճառներից, դա նույնպես հանգեցնում է ուղղակի ընտրական իրավունքի խախտման, քանի որ ուղղակի ընտրական իրավունքը չի ենթադրում զեկուցել որևէ անձի կատարված ընտրության մասին:

Ձևական առումով ուղղակի ընտրական իրավունքի պահանջը թվում է, թե պահպանված է, սակայն բովանդակային առումով քաղաքացիների ուղղակի ընտրական իրավունքը խախտվել է տարբեր դրվագներով՝

- Քաղաքացիներին ենթադրաբար ստիպել են լուսանկարել քվեաթերթիկը[15].
- Քաղաքացիներին ենթադրաբար ստիպել են դուրս բերել որոշ ընդդիմադիր ուժերի քվերաթերթիկները[16]:

Այս միջոցների կիրառման արդյունքում ընտրողները անմիջականորեն չեն ընտրել իրենց նախընտրած քաղաքական ուժին, այլ ներկայացել են ընտրատեղամաս ենթադրաբար մեկ այլ անձի՝ իրենց վերադասի կամ վերադասի վերադասի կամքը կատարելու համար:

➢ ՔՎԵՐԱՐԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍՈՎ

«Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածը **(քվեարկության գաղտնիությունը)** սահմանում է՝ *Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:*

Ընտրողների կամքի վրա ազդեցությունները եղել են մասսայաբար:

Դրանք արտահայտվել են ինչպես քվեախցիկից դուրս քվեարկություն կատարելով, մեկից ավելի անձ քվեախցիկում գտնվելով, այնպես էլ այս կամ այն կուսակցության քվեաթերթիկը դուրս բերելով, որպիսի փաստերով մամուլը ողողված է:

Ստորև հղում է արվում այն բազմաթիվ տեսանյութերից մեկին, որտեղ ակնհայտ երևում է ընտրողի կամքի վրա ազդեցությունը այլ անձի կողմից, ով նրա հետ միասին գտնվում էր քվեախցում[17]:

Բացի այդ եղել է տեղամաս, որի կահավորումն արդեն իսկ բացառել է գաղտնի քվեարկության հնարավորությունը, քանի որ թափանցելի պատուհանի անմիջապես դիմացն է դրված եղել քվեախցիկը և ընտրողը ունեցել է հնարավորություն ցույց տալ պատուհանից այն կողմ գտնվող ամձին, թե ում օգտին է քվեարկել: Թափանցող պատուհանի վերաբերյալ հղումը կցվում է[18]:

➢ ԱՆՎԱՎԵՐ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՔԱՆԱԿ

2026թ. հունիսի 7-ի ընտրություններում անվավեր է ճանաչվել 17,097 քվեաթերիկ, ինչը նշանակում է որ նույն քանակի քաղաքացիների ընտրական կամքը չի ծառայել իր նպատակին: Ավելին, մենք իհարկե չենք բացառում, որ որոշ ընտրողներ միտումնավոր իրենց քվեաթերթիկը անվավեր դարձնեին, սակայն ակնհայտ է, որ խոսքը չէր կարող գնալ

[15] https://civic.am/news/117086

[16] https://www.azatutyun.am/a/33768505.html

[17] https://www.facebook.com/reel/962572383276749

[18] https://www.facebook.com/watch/?v=1241729644543093

ավելի քան 17000 ընտրողի մասին: Այս քանակը արդեն իսկ հուշում է, որ եղել է ընտրողների կամքի նկատմամբ էական միջամտություն: Համեմատության համար նշենք, որ թե՛ 2018 և թե՛ 2021թ. Ազգային ժողովի ընտրություններում անվավեր է քվեաթերթիկների շեմը չի հատել 5000-ի սահմանը:

Առկա են եղել նաև կրկնաքվեարկության և այլ խախտումներ: Մասնավորապես մամուլում առկա է տեղեկություն այն մասին, որ արձանագրվել է կրկնաքվեարկության՝ 37, քվեարկության գաղտնիության խախտման՝ 24, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու՝ 6, ընտրական գործընթացներին խոչընդոտելու, ընտրակաշառք տալու, ընտրատեղամասում սառը զենք կրելու, խուլիգանության, ֆիզիկական ներգործության 1-ական դեպքեր, որոնցով կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին[19]:

Ինչպես տեսնում ենք ընտրական իրավունքի բոլոր հնարավոր խախտումները նշված ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել՝ սկսած ընտրական իրավունքից զրկելով, շարունակած նախընտրական քարոզարշավի ընթացքում տոտալ վարչական ռեսուրսի օգտագործմամբ, քվեարկության գաղտնիության մասսայական խախտումներով, մեկ հասցեի վրա 300 անձ գրանցելու[20] «ֆոկուսով» և այլն:

Նման պայմաններում մեր կարծիքով ՀՀ Սահմանադրական դատարանի առաքելությունն է վերականգնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքը, որը կենսական անհրաժեշտություն է ժողովրդավարության ռեժիմը ավտորիտար կառավարման ձևից տարանջատելու համար և նոր պատմական ժամանակաշրջանի ուղղակի հրամայական է:

Համատարած ընտրական իրավունքի խախտումների արդյունքում քաղաքացիների ընտրական իրավունքի վերականգնման միակ հնարավորությունը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. որոշումն անվավեր ճանաչելն է և նոր ընտրությունների նշանակումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ ենթակետի պահանջներով,

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ՝

1. Սույն դիմումն ընդունել վարույթ:
2. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 258-Ա որոշումը:

Կից ներկայացվում է՝

1. *Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 258-Ա որոշումը՝ արտատպված պաշտոնական կայքից.*

[19] https://www.aravot.am/2026/06/07/1562131/

[20] https://arm.sputniknews.ru/20260610/mek-hascei-vra-yndhup-minchev-303-mard-e-hashvarvats-eghel-melvojann-arandznacrel-e-khakhtumnery-103331972.html

2. *«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության պետական ռեգիստրի վկայականի պատճենը.*
3. *Հայկ Մարությանի նույնականացման քարտի պատճենը.*
4. *ՀՀ ԿԸՀ 03.05.2026թ. N83-Ա որոշման պատճենը:*

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության վարչության նախագահ

Հայկ Մարության